

# ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



Երեքշաբթի 01 Յունիս 2021 - Թիւ 31

Հրատարակչութիւն՝

Արեւմտեան Հայաստանի Հանրապետական  
Նախարարութիւն

Հետադարձ կապ  
[contact@western-armenia.eu](mailto:contact@western-armenia.eu)



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջին Էջ	1
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն	2
Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարան)	6
Պետական փաստաթուղթեր	8
Վերջին Էջ	9



# ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



## Նախագահ Արմենակ Աբրահամեանը այցելել է ՀՃՈՒ Հայաստան գրասենեակ



2021 թուականի Մայիսի 3-ին տեղի ունեցավ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմենակ Աբրահամեանի հանդիպումը ՀՃՈՒ-RAA հիմնադրամի աշխատակիցներու հետ՝ իրենց գրասենեակին մէջ:

Հանդիպումը նախատեսուած էր նախօրոք եւ նպատակը ՀՃՈՒ գրասենեակի աշխատակիցներուն ծանօթացնել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմենակ Աբրահամեանի կողմէ 2005-2008 թթ.-ին Երաղատարանի մէջ բացուած դատին՝ ընդդէմ Ատրպէյջանի, որտեղ Ատրպէյջանը կը մեղադրուի Ջուղայի 1000-է աւելի խաչքարերու ոչնչացման համար:

ՀՃՈՒ աշխատակիցները խնդրեցին ԱՀՀ նախագահին միջնորդութիւններ ներկայացնել Նոր բացայայտուած փաստերով եւ առանձին յուշարձաններու հարցով:

Նախագահ Աբրահամեանը համաձայնեցաւ յանձն առնելու այդ գործին եւ ԱՀՀ անունով Նոր յայտեր ներկայացնել Երաղատարան:

Հանդիպման ժամանակ քննարկուեցան նաեւ ՍԵԼԻ դաշնագիրը, Կիլիկիայի եւ Լոզանի պայմանագիրները եւ այլ հարցեր:

### Նախագահ Արմենակ Աբրահամեանը կը դատապարտէ ատրպէյջանական զինուած ուժերու ներթափանցումը Հայաստանի եւ Արցախի տարածք

MAY 13, 2021

Նախագահ Արմենակ Աբրահամեանը դատապարտեց ատրպէյջանական զինուած ուժերու ներթափանցումները Հայաստանի եւ Արցախի տարածքներուն:

Նախագահ Աբրահամեանն կը հրաւիրէ համապատասխան մարմիններուն ամրապնդելու կապերը Արեւմտեան Հայաստանի իշխանութիւններու հետ՝ հնարաւորինս շուտ թոյլ տալու Արեւմտեան Հայաստանի կամաւորական զօրախումբերու մասնակցութիւնը համապատասխան տարածքներու պաշտպանութեանը:

Նախագահ Արմենակ Աբրահամեանը կը յիշեցնէ 1920 Էն ի վեր Հայաստանի ձեռք բերած իրաւունքները (Արեւմտեան Հայաստանի տարածքէն) եւ վերջերս տարածքային ամբողջականութեան պաշտպանութիւնը:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան  
առավարութեան յայտարարութիւնը



Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւնը կը յայտարարէ, որ ի յայտ եկած են խումբ մը կազմակերպութիւններ ու անհատներ, որոնք թէ Հայաստանի Հանրապետութեան թէ արտերկրի մէջ հանդէս կուգան Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական դրոշով, օգտագործելով Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան խորհրդանիշները իրենց կազմակերպութեան անուան մէջ:


**Օրինակ՝ Արեւմտեան Հայաստանի Հայերու Պաշտպանութեան Արեւելեան Միաւորման Պաշտպանութեան Ուժերու եւ «Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան Բանակ»:**

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւնը, որն ստեղծուեր է Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդէն՝ Արմենակ Աբրահամեանի Նախագահութեամբ, պաշտօնապէս կը յայտարարէ, որ այս եւ նման կազմակերպութիւններու գործողութիւնները կը ներկայացնեն տիտղոսի ու պետութեան գործառոյթի բռնատիրութիւն՝ ընդդէմ Արեւմտեան Հայաստանի պետութեան եւ անոր քաղաքացիներու անվտանգութեան:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւնը պաշտօնապէս կը յայտարարէ, որ պատասխանատուութիւն չի կրեր նման անօրինական կազմակերպութիւններու գործողութիւններու համար, որոնք հանդէս կուգան Արեւմտեան Հայաստանի եւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան անունով:



ԱՀՀ Նախագահ Արմենակ  
Աբրահամեանի այցը՝  
«Ցեղասպանութեան յուշահամալիր»



Մայիսի 5-ին Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմենակ Աբրահամեանը այցելեց «Ցեղասպանութեան յուշահամալիր»՝ կենտրոնի նիւթերուն ծանոթանալու եւ ԱՀՀ արխիվային նիւթերու հետ համամեմատելու Նպատակով: Արմենակ Աբրահամեանը շրջայց կատարեց կենտրոնը, ուսումնասիրեց ցուցադրուած նիւթերը, իրերը, փաստաթուղթերը, որոնց մեծ մասը ծանօթ էր: Այցելութեան վերջը Նախագահ Աբրահամեանը Նուէր ստացաւ Շառլ-Տիրան Թեբէյեանի կողմէ 2020 թուականին Երեւանի մէջ հրատարակուած «Քառամեայ պատերազմ Արեւելքի մէջ» յուշագրութիւնը:

Հարցազրոյց Արեւմտեան Հայաստանի  
Հանրապետութեան ԱԳ Նախարար  
Լիտիա Մարկոսեանի հետ



Western Armenia TV-ի եթերով Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Արտաքին գործերու Նախարար Լիտիա Մարկոսեանը ներկայացուց Հայերու դէմ իրագործուած ցեղասպանութեան իրական դրդապատճառները, անդրադարձաւ ազգային ինքնակազմակերպմանը եւ պետական շահերու վերականգնման շրջանակներուն խանգարող գործոններուն: Եզրափակելով հարցազրոյցը՝ խօսեցաւ դիւանագիտական մակարդակի տարուող գործընթացներէն եւ ապագայ ծրագիրներու մասին:

## Միջազգային իրաւունքի պարտաւորութիւնները եւ Հայերու դէմ իրագործուած ցեղասպանութիւնը



**ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ** – Միացեալ Նահանգներու Նախագահ ժոզեֆ Դայտենը ընտրուեցաւ 2021 թուականի Յունուարի 20-ին՝ հիւսկ տարի ժամկետով: Նախագահ ժոզեֆ Դայտենն իր ընտրութիւնէն երեք ամիս ետք ընդունել է Արեւմտեան Հայաստանի հայ բնակչութեանը ոչնչացնելու հանցաւոր արարքը որպէս Ցեղասպանութիւն:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Սենատը դե յուրե ճանչցած է Հայաստանի Հանրապետութիւնը Արեւմտեան Հայաստանի տարածքին 1920 թ. Մայիսի 11-ին:

Այդ տարածքին մէջ Թուրքիայի յաջորդական կառավարութիւնները կատարած են ցեղասպանութեան հանցագործութիւն:

Հաշուի կառնենք Նախագահ Վուորոյ Ուիլսոնի կողմէ 1920-ի Նոյեմբերի 22-ին ստորագրուած Իրավարար վճիռը, որու միջոցով պաշտօնապէս որոշուած էին Արեւմտեան Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանները:

Հաշուի կառնենք նաեւ 1951 թ. Մայիսի 28-ին Ցեղասպանութեան հանցագործութիւնը կանխարգելելու եւ պատժելու մասին կոնվենցիայի վերաբերեալ ամերիկեան վերապահումները, 1950-ի Յուլիսի 31-ին Թուրքիայի կոնվենցիային միանալը:

Կոնվենցիայի գոյութիւնը հիմնուած է ցեղասպանութեան սահմանման վրայ, որը կը ներառէ նաեւ «Թուրքիայի կոտորածները հայերու դէմ», որը մարդկութեան դէմ ուղղուած երեք յանցագործութիւններէն մէկն է:

Այդ ժամանակէն ի վեր Միացեալ Նահանգներու կողմէ ճանաչուած Արեւմտեան Հայաստանի Պետութիւնը եւ հայ ժողովուրդը կը հետեւի ամերիկեան իշխանութիւններու հետ մերձեցման իրենց ռազմավարութեանը՝ կապուած Էլզեկվատուրաի կիրառման եւ անկէ բխող իրաւունքներու հետ:

Այնուամենայնիւ, 1987 թ.-ի Յունիսի 18-էն Եւրոպայի մէջ ձեւաւորուեցաւ նոր քաղաքական տիւնամիկա, որը կը հետապնդէր հայերու դէմ իրագործուած ցեղասպանութեան միջազգային ճանաչման հնարաւորութիւնը եւ կարողութիւնը՝ միաժամանակ կը շրջանցէր մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութեան մէջ մեղաւոր պետութեան իրաւական պարտաւորութիւնները:

Հայկական հարցի քաղաքական լուծումը, որը հաստատուել է Եւրախորհրդարանի կողմէ 1987 թուականի Յունիսի 18-ին, անոր ապացոյցն է իր յողուած 2-ի մէջ.

## Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան

2. կարծում է, որ Օսմանեան կայսրութեան տարածքին հաստատուած հայերու դէմ 1915-1917թթ. տեղի ունեցած ողբերգական իրադարձութիւնները ցեղասպանութիւն կը կազմեն ըստ՝ 1948 թ. Դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխաւոր ասամպլեայի կողմէ ընդունուած ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխելու եւ պատժելու մասին կոնվենցիայի.

2-րդ յոդուածը կընդունի, սակայն, որ ներկայ պահին Թուրքիան չի կարող պատասխանատուութիւն կրել Օսմանեան կայսրութեան հայերու ապրած ողբերգութեան համար եւ խիստօրէն կը շեշտէ, որ այս պատմական իրադարձութիւններու ցեղասպանութիւն ճանաչումը չի կարող որեւէ քաղաքական, իրաւական կամ նիւթական պահանջի հիմք դառնալ ներկայիս Թուրքիայի համար;

[https://www.cvce.eu/obj/resolution\\_du\\_parlement\\_europeen\\_sur\\_une\\_solution\\_politique\\_de\\_la\\_question\\_armenienne\\_18\\_juin\\_1987-fr-91fbffca-0721-49d5-9e53-f95393d470b2.html](https://www.cvce.eu/obj/resolution_du_parlement_europeen_sur_une_solution_politique_de_la_question_armenienne_18_juin_1987-fr-91fbffca-0721-49d5-9e53-f95393d470b2.html)

Հայերու դէմ իրագործուած ցեղասպանութիւնը ճանաչելու որոշման մասին Լատուիայի խորհրդարանի 2021 թուականի Հունուարի 20-ի Հռչակագրի մէջ 1987-ի Հունիսի 18-ի այս քաղաքական բանաձեւի հղումը օրակարգ կը բերէ այն անարդարութիւնը, որը կրեր է Արեւմտեան Հայաստանի հայ ժողովուրդը՝ ոչնչացման ծրագրի հետ կապուած, որուն ենթարկուել է ան:

Եւրախորհրդարանը, որը, իբր, այս բանաձեւով Մարդու իրաւունքներու սրբավայր , ստեղծեր է քաղաքական հրեշ, որը կը խեղաթիւրէ մարդու իրաւունքները եւ կարդարացնէ քրեական պետութիւնը: Լատուիայի խորհրդարանը պետք չէ ընթանար այս ուղիով, ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ պատժելու մասին կոնվենցիային հղումը ակելին քան բաւարար էր:

Արմենակ Աբրահամեան  
Արեւմտեան Հայաստանի Ազգային խորհուրդի նախագահ

## ԱՅՆ նախագահը հանդիպում ունեցաւ պատմաբան Ամսելա Տէրեանի հետ



Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմենակ Աբրահամեանը, Ամերիկայէն Երեւան ժամանած Ռաֆֆի Նազարեանը եւ Անուշ Մելիքեանը աշխատանքային հանդիպում ունեցան պատմաբան Ամսելա Տէրեանի հետ, ով վերջերս հրատարակած էր «Պատմութիւն Արարատ Երկրի/Մ.Թ.Ա. 4-1 հազարամեակներ» աշխատութիւնը: Տիկին Տէրեանը ներկայացուց գիրքի կարեւորութիւնը, յատկապէս այս շրջանին, երբ հարեւան պետութիւնները կը փորձեն կեղծել պատմութիւնը եւ Հայաստանի պատմական տարածքները վերագրել իրենց: Գիրքի շուրջ տեղի ունեցաւ մանրամասն քննարկում, որմէ ետք Աբրահամեանը առաջարկեց գիրքը հրատարակել նաեւ ֆրանսերէն լեզուով, յանձն առնելով անոր ֆինանսաւորումը:

Հանդիպում տեղի ունեցաւ նաեւ Երեւանի պատմութեան թանգարանի տնօրէնի եւ Շուշիի պատմութեան թանգարանի տնօրէնի հետ, որոնց հետ համագործակցութեան նոր հեռանկարներ կը կայանայ յետագային:

## Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան



2021 թուականի Մայիսի 20-ին Վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը յայտարարեց, որ պատրաստ կըլլայ Ատրպէյջանի հետ փաստաթուղթ ստորագրել սահմաններու սահմանազատման եւ գծանշման վերաբերեալ:

Ցանկացած փաստաթուղթ, որը հաշուի չի առնուիր Հայաստանի տարածքին Արցախի տարածքային ամբողջականութիւնը, միջազգային իրաւունքին եւ հայ ժողովրդին կը հակասէ՝ իր պատմութեան եւ ապագայի նկրտումներու դէմ ուղղուած փաստաթուղթ է:

Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը սոյն եւ յետագայ պարագային անվավեր կը ճանաչի ցանկացած փաստաթուղթ կամ գործողութիւն, որը ստորագրած է Հայաստանի Հանրապետութեան (Արեւելեան) Վարչապետի պաշտօնակատարը կամ նշուած Հանրապետութեան այլ ներկայացուցիչ, որը հաշուի չի առնէր 1920 թ. Հայաստանի կարգավիճակը Սեւրի պայմանագիրի 92-րդ յոդուածի, Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան հիման վրայ եւ չի դատապարտեր մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւնները եւ Ատրպէյջանի կողմէ իրականացուած ռազմական յանցագործութիւնները հայ ժողովուրդի դէմ:

Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը կը յիշեցնէ, որ կը ձեռնարկէ բոլոր անհրաժեշտ որոշումները եւ միջոցները՝ պաշտպանելու Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի մէջ ապրող իր ժողովուրդի գոյութեան իրաւունքը:

Արտաքին գործերու նախարարութեան եւ կառավարութեան խօսնակ:

### Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահական հրամանագիր

№88 – 2021.05.11

Լոս Անջելէս (Կալիֆոռնիա) Ամերիկայի Միացյալ Նահանգներ մէջ Արեւմտեան Հայաստանի Գլխավոր հիւպատոսի նշանակման հետ կապուած:

Հանրապետութեան Նախագահը,

Հաշուի առնելով Ֆրանսիայէն եւ Լոս Անջելէս Արեւմտեան Հայաստանի քաղաքացիութիւն ստանալու դիմումներու թիւի աճը.

Հաշուի առնելով 2014 թ. Մարտի 12-ի թիւ 16 հրամանագիրը.

Հաշուի առնելով Սահմանադրութեան 77-րդ հոդուածը.

Հրամանագիրներ.

Հոդուած 1. - Ամերիկայի Միացյալ Նահանգներ Լոս Անջելէսի (Կալիֆոռնիա) քաղաքին մէջ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Գլխավոր հիւպատոսութիւն ստեղծել:

Հոդուած 2. - Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Գլխավոր հիւպատոսի նշանակումը Լոս Անջելէս (Կալիֆոռնիա) Ամերիկայի Միացյալ Նահանգներ մէջ ՚ի դէմս արն. Րաֆի ՆԱԶԱՐԵԱՆԻ:

Հոդուած 3. - Նշանակումը նախատեսուած է երեք տարի ժամկետով՝ երկարաձգելու հնարաւորութեամբ

Հոդուած 4. - Որոշումը կը հրապարակուի Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական տեղեկագիրին մէջ:

**Արմենակ ԱՐԱՅԱՄԵԱՆ**

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ



### Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողով

#### Մայիսի 15-ին Չեկոյց Ինչ Է Արեւմտեան Հայաստանը



Յարգելի հետեւորդներ սոյն թուականի Մայիսի 15-ին ժամը 21:00, ZOOM հարթակով տեղի կունենայ «Ինչ է Արեւմտեան Հայաստանը» խորագիրով զեկույց:

Չեկուցող Կիլիերմոյ Գարամանեան, Արգենտինայի մէջ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսը:

Չեկույցին կարող եք հետեւիլ նաեւ Արեւմտեան Հայաստան Facebook- եան խումբով:

#### Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի Նիստ



Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանի Նախագահ Լեոնարտոյ Պասմաճեանի գլխավորութեամբ տեղի ունեցաւ խորհրդարանի հերթական նիստը: Նիստին մասնակցեցան Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պատգամաւորներ՝ ԱՄՆ-Էն, Սուրիայէն, Արգենտինայէն, Արցախէն, Արեւելեան Հայաստանէն եւ այլ երկիրներէ:

2021 թուականի Ապրիլի 14-ին ԱՀՀ Ազգային Ժողովը, ուսումնասիրելով Սամ Թիլքէյեանի եւ Կառավարութեան Կողմէ առաջարկուող երկու փոփոխութիւնները, Մայիսի 5-ին լրամշակուած օրինագիծը ներկայացուեցաւ քուէարկութեան:

Պատգամաւորներու կողմէ օրինագիծը ընդունուեցաւ քուէարկութեամբ, բոլորը կողմ եւ մէկ ձեռնպահ ձայնով:

Օրէնքը ուղարկեցին ԱՀՀ Նախագահին՝ վավերացնելու համար: Վավերացուելէ ետք այն կը ներկայացուի սահմանադրական խորհուրդ՝ Արեւմտեան Հայաստանի ազգային սահմանադրութեան մէջ ընդգրկուելու համար: Հիմնուելով ԱՀՀ ազգային սահմանադրութեան 76-րդ յօդուածին՝ Հանրապետութեան Նախագահը 21-օրուայ ժամկետով կարող է ստորագրել եւ հրապարակել ԱՀՀ ԱԺ-ի կողմէ հրապարակուած օրէնքը:



### Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան դէ յուրէ ճանաչման 101-րդ ամեակը»

<https://www.youtube.com/watch?v=D1e1VIsXjtg&t=3742s>



Արեւմտեան Հայաստանի Երեւանեան գրասենեակին մէջ տեղի ունեցաւ «Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան դէ յուրէ ճանաչման 101-րդ ամեակը» խորագիրով գիտաժողովը: Բացման խօսքով հանդէս եկաւ ԱՀՀ վարչապետ Սեդա Մելիքեանն, ով ողջունելով գիտաժողովի մասնակիցներուն, յոյս յայտնեց, որ այս միջոցառումը մոտ ապագային կիրականացնեն Մայր հայրենիքի՝ Կարինի մէջ: Այնուհետեւ ներկայացուց Ռաֆֆի Նազարեանին, ով պիտի աշխատի ԱՀՀ ղեկավարութեան հետ համատեղ, Արեւմտեան Հայաստանի ազատագրման գաղափարով:



Ծաւալուն ելոյթով հանդէս եկաւ ԱՀՀ Նախագահ Արմենակ Աբրահամեանը Արեւմտեան Հայաստանի ԴԷ յուրէ ճանաչման մասին՝ պատմական անդրադարձ կատարելով 1900 թուականէն սկսուած Արեւմտեան Հայաստանի մէջ տիրող իրավիճակին, այն կարեւոր դեկրետներուն եւ պայմանագիրներուն, որոնք ճակատագրական եղած են հայութեան համար, ինչպէս նաեւ ներկայացուց Սեւրի դաշնագրի կարեւորութիւնը ստորագրելու պահէն մինչեւ հիմայ, քանի որ ներկայ իրավիճակը թոյլ կուտայ այն արդիական համարել: Միջոցառման ընթացքին Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պատուաւոր քաղաքացիի կոչում ստացան աշխարհահռչակ օպերային երգիչ, թենոր Վանտ Թադէոն եւ երգիչ, երգահան Արսեն Համպարեանը:



Միջոցառումը ելոյթով եզրափակեց ԱՀՀ ԱԺ պատգամաւոր Ռուզաննա Խաչատրեանը:


## 2021 թ. Մայիսի 9-ին Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան ազգային սահմանադրութեան 5-ամեակ



ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ – Մայիսի 9-ը հայերու համար իսկապէս կարեւոր օր է, քանի որ այդ օրը կը նշուի 1945 թ.-ին Ռուսաստանի յաղթանակը նացիստական Գերմանիայի նկատմամբ, 1992 թ.-ին Շուշիի ազատագրումը եւ 2016-ին Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան ազգային սահմանադրութեան ընդունումը:



Օրուայ շրջանակներուն Արեւմտեան Հայաստանի պատուիրակութիւնն այցելեց Մայր Հայաստան յուշարձան եւ յարգանքի տուրք մատուցեց Յաղթանակի մարտիկներուն: Պատուիրակութիւնը շարունակեց այցը «Մայր Հայաստան» ռազմական թանգարանին մէջ, որպէսզի Նախագահ Արմենակ Աբրահամեանը ներկայացնէ Առաջին Արցախեան պատերազմի (1991-1994) 500 մահապարտ ջոկատներու (Արծիւներ) պատմութիւնը:



Այնուհետեւ Նախագահ Աբրահամեանը վերադարձաւ Արեւմտեան Հայաստանի Երեւանեան գրասենեակ՝ ողջունելու Արեւմտեան Հայաստանի Կամաւոր Մարտիկներուն՝ Արեւմտեան Հայաստանի ռազմական իշխանութիւններու, Պաշտպանութեան Նախարար Համիկ Սայադեանի, ՊՆ փոխնախարար Սուրեն Շահումեանի եւ Գնդապետ-Լեյտենանտ Յարութիւն Յակոբեանի ներկայութեամբ:

Նախագահ Արմենակ Աբրահամեանը յարգանքի տուրք մատուցեց Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Սահմանադրութեան 5-րդ տարեդարձի կապակցութեամբ եւ կոչ ուղղեց խումբերուն աշխատելու բոլոր հնարաւոր եղանակներով՝ ամրապնդելու Արեւելեան Հայաստանէն եւ Արեւմտեան Հայաստանէն կազմուած ամբողջ Հայաստանի սահմաններու պաշտպանութիւնն ու ամբողջականութիւնը՝ ներառեալ Արցախը:

- [http://www.western-armenia.eu/stat.gov.wa/arm/2017/Arevmdyan\\_Hayasdani\\_Hanrabedoutyan\\_Sahmanadroutyouan-09.05.2016.pdf](http://www.western-armenia.eu/stat.gov.wa/arm/2017/Arevmdyan_Hayasdani_Hanrabedoutyan_Sahmanadroutyouan-09.05.2016.pdf)
- [http://www.western-armenia.eu/stat.gov.wa/fr/2020/Constitution\\_Nationale\\_dArmenie\\_Occidentale-fr-09.05.2020.pdf](http://www.western-armenia.eu/stat.gov.wa/fr/2020/Constitution_Nationale_dArmenie_Occidentale-fr-09.05.2020.pdf)
- [http://www.western-armenia.eu/stat.gov.wa/fr/2020/Constitution\\_Nationale\\_dArmenie\\_Occidentale-gr-09.05.2020.pdf](http://www.western-armenia.eu/stat.gov.wa/fr/2020/Constitution_Nationale_dArmenie_Occidentale-gr-09.05.2020.pdf)

Մասնակիցները նորոգեցին հայրենիքը պաշտպանելու իրենց երդումը:

Արեւմտեան Հայաստանի կամաւոր մարտիկները կը տեղակայուին՝ համաձայնեցուած Հայաստանի Հանրապետութեան ռազմական իշխանութիւններու հետ:


Նախագահ Արմենակ Աբրահամեանը պաշտօնապէս կոչ կուղղէ աշխարհի հայերուն աջակցելու Արեւմտեան Հայաստանի կամաւոր մարտիկներուն:

ԱՐԵՄՍԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԵՐՈՒՆ ԱԶԱԿՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
 ՆՈՒԻՐԱՏՈՒԿԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ IBAN : FR76 3000 4000 6600 0100 3337 867  
 ՆՈՒԻՐԱՏՈՒԿԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ [PAYPAL](#)

### Հին հայկական հաւատքներու գաղտնիքը

Մշակույթ

MAY 3, 2021



**ԱՐԵՄՍԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ** -Ներկայացուած նկարի մէջ կը ցուցադրենք քարերու եւ տաճարներու կառուցուելէն դարեր ետք փորագրուած լատինական, «յունական» եւ «եբրայական» տառերու քանի մը օրինակներ: Այն տաճարներու համար, որոնք կառուցուած են կատարեալ համաչափութեամբ եւ լազերային կտրուած քարերով կամ տեխնոլոգիայով, տաճարներու վրայ գրուած հին հնդկական եւ սանսկրիտեան գրութիւնները հապճեպ կամ տարրական կը թուի:

7 երկնքի գաղափարը փոխանցուեր է ամենահին քաղաքակրթութիւններու՝ ներառեալ առաջին քրիստոնիաները, մահմետականները, հնդիկները եւ Միջագետքի ցեղերը:

Այս պատմութեան շատ տատանումներ կան, բայց այն, ինչ ես հասկցած եմ իմ տարիներու ուսումնասիրութեան ընթացքին, առաջին երկինքը այն է, ինչը տեսանելի է մարդկանց համար երկրի վրայ: Երկինքը, աստղերը, արեւն ու լուսինը: Երկրորդ երկինքը հիմքն է: Երկնային արքայութեան եւ երկրի կապը: 3-րդ երկինքը դրախտի դարպասն ու մուտքն է, որտեղ հրեշտակային էակները կը հսկեն երկիրը եւ կը ծառայեն որպէս պահապաններ:

4-րդ երկինքը այն է, որը կարող է ձեզի հետաքրքրէ:

Այդ ոսկիի, ուտոպիայի, մաքրութեան եւ երկնային էակներու երկինք է, որոնք կը տիրապետեն Աստուծոյ լոյսին եւ գաղտնիքներուն:

Փաստօրէն, անոնք այնքան հաւատարիմ են երկնային տիրոջին, որ երկնքի այս 4-րդ մակարդակը յայտնի էր որպէս ԼՈՒՌԹԵԱՆ երկինք, որտեղ Աստուածները չունէին ձայն կամ ԽՕՍԵԼՈՒ ԼԵՉՈՒ: Անոնք կը խօսէին աստուածային տելեպաթիայի եւ աստուածային հեռակիսեզի միջոցով:



Ա՞րդեօք այս կարող է ըլլալ այն պատճառը, որ Կիլիկիայի, Լիկիայի մէջ եւ Փոքր Ասիայի մէջ մենք յայտնաբերած ենք հնագոյն քարեր եւ արձաններ, որոնք կը ներկայացնեն երեցներուն ` լայնօրէն բացուած աչքերով եւ բերանով, սարսափահար տեսքով: Լիովին սարսափած ու տիրացած, կարծես այլեւս ձայն չունէին: Երկնային աստուածներուն արգիլուած էր մարդկանց տալ երկնային կամ հոգեւոր աշխարհի մասին յայտնի գիտելիքներ, եւ երբ Լիուցիֆերը փաստօրէն մարդկանց տուաւ այդ գիտելիքները, այդ չարի դէմ բարիի ճակատամարտի սկիզբն էր: Թերեւս զուր չէ, որ տեխնոլոգիապէս զարգացած հնագոյն շինարարները, ովքեր կառուցած եւ կանաչապատած են զանգվուածային տաճարներ, գրաւոր չեն բացայայտեր իրենց գաղտնիքները: Հնարաւոր է, որ այդ արգիլուած էր:

Աստվածաշունչի մէջ գրուած է. «Ես Քրիստոսի մէջ գիտեմ մէկ մարդու, որը տասնչորս տարի առաջ երրորդ երկինք էր տարվել: Ես չեմ գիտեր `այդ անոր մարմնի մէջ էր, թէ անոր մարմինէն դուրս` Աստուած գիտէ: Եւ ես գիտեմ, որ այդ մարդուն դրախտ տարած են եւ լսած անասելի բաներ, բաներ, որոնք ոչ մէկին թոյլ չեն տար պատմելու »- 2 Կորնթացիներ 12: 2-4

Համոզուած եմ, թէ որքան շատ ուսումնասիրութեան ընթացքին հանդիպիս խորին եւ ճշմարտացի ուղի, այնքան ակելի շատ կը գիտակցիս, որ այն, ինչ քեզ կ'ըսեն հին «դիցաբանութիւն», իրականութեան դիցաբանութիւնն չէ:



Երեքշաբթի 01 Յունիս 2021 - Թիւ 31

Հրատարակչութիւն՝

Արեւմտեան Հայաստանի  
Հաղորդակցութեան Նախարարութիւն

Հետադարձ կապ  
[contact@western-armenia.eu](mailto:contact@western-armenia.eu)

**Օժանդակեցեք Արեւմտեան Հայաստանը**

**WESTERN ARMENIA FOUNDATION**

CNA

RIB : 30004 00066 00010033378 67

IBAN : FR76 3000 4000 6600 0100 3337 867 - BIC : BNPAFRPPMAS